Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

396
Г-41

0120-10

396
Բ-41

139

ԲԻԲԼԻ

ԿՆՈՋ ՆԵՐԿԱՅ ԵՒ ԱՊԱԳԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Թարգ. ռուսերէնից

Օր. ՍՕՖԻԱ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Էլեքտրաշարժ տպարան «ՀԵՐՈՒՍ» ընկերութեան
1905

07 MAR 2013

Սակայն թրխաբ Օր. Յովսեփա Կոստանդի
գրադարանաց ԲԻԲԼԻ թատրոն Աշխարհաբար
խուսափեան է յիշատակ Արքա Զաւոնեան
1914. II. 26.
թրխաբ.

200
Բ-323

ԿՆՈՋ ՆԵՐԿԱՅ
ԵՒ ԱՊԱԳԱՅ ԴՈՒՐԹԻՆԸ

396
Բ-41
Կ
36637

Թարգ. ռուսերէնից

Օր. ՍՕՖԻԱ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

ԹԻՖԼԻՍ 1906
Տպարան „ՀԱՅՄԷՍ“ Մաղաքեան փող. 15.
(128)

Дозволено цензурою. Тифлисъ, 8 іюля 1905 г.

Հեղինակներից շատերն այն կարծիքի են, որ ամուսնությունը պետք է լինի մի մասնաւոր դաշն։ Այդ կարծիքը շատ արմատական է երևում, բայց ժամանակակից սոցիալական պայմաններում այդպիսի մասնաւոր դաշն տակաւին չի փոխի կնոջ դրությունը։ Կնոջ համար դա ունի նոյնքան չնչին նշանակություն, որքան այն փաստը, որ կինը իւր այժին և ընդունակության համապատասխանող ինչ աշխատանքի շրջանում էլ լինի, կարող է միջոցներ ձեռք բերել իւր գոյության համար։ Երկու դէպքումն էլ նա ճնշուած էակ է, որովհետև ոչ միայն նրա տնտեսական ազատությունը, այլ նոյն իսկ ամուսնանալու և ապահարզան ստանալու հեշտությունը չէ կարողանում նրան պաշտպանել տնտեսական և հասարակական ճնշումից ու շահագործությունից։ Քանի որ կինը իւր սոցիալական դրությամբ (այսինքն տնտեսական) չի լինի բոլորովին անկախ և տղամարդու դրության հաւասար, քանի որ երկու սեռի քաղաքական իրաւունքները չեն հաւասարուի, ամուսնության մասնաւոր բնաւորությունը նոյնքան քիչ օգտակար կը լինի կնոջ համար, որքան ամենագեղեցիկ սահմանադրությունը ժողովրդի համար, որի իրաւունքները և ազատությունը դե-

կավարում են տէրութիւնը և տիրապետող դասակարգերը, ունենալով իրանց ձեռքին ոչ միայն հարստութիւն, այլ և ֆիզիքական և հոգեկան իշխանութիւն։ Ժողովրդի համար այսպիսի սահմանադրութիւնը միայն թղթի վրայ է։ Մասնաւոր ամուսնական դաշն ներկայ դրութեան մէջ կնոջ համար աւելի վնասակար է, քան օգտաւէտ։

Երբէք բուրժուա հասարակութիւնը չի համաձայնի ընդունել ամուսնական դաշնը իբրև բացառապէս մասնաւոր դաշնադրութիւն, որովհետև ամուսնութիւնը անքակտելի կերպով կապուած է բուրժուական սեփականութեան հետ, նոյն իսկ անհրաժեշտօրէն այդ տեղից է բղխում։ Բուրժուական դասակարգը չի համաձայնում ամուսնութիւնն ընդունել իբրև մասնաւոր դաշն, չը նայելով, որ ամուսնութեան դաշնի քակուելու դէպքերը շատ յաճախ են կրկնւում և իսկապէս պէտք է յաճախ կրկնուեն, որովհետև ամուսնութեան դաշնը, իսկապէս ասած, ստիպողական մի հիմնադրութիւնն է.— ամուսնանում են ոչ թէ իրանց ներքին համոզմունքից դրդուած, այլ զանազան հաշիւներից։

Տղամարդը շնորհիւ իւր տնտեսական և սոցիալական դրութեան, կազմում է տիրապետող կողմ և դրանով բացատրվում է այն ազատութիւնը, որ նա թոյլ է տալիս իրան՝ կնոջ վերաբերմամբ։ Դրանով է նոյնպէս բացատրվում և այն, որ հաւատարմութեան խանգարումն ամուսնութեան մէջ մեծ մասամբ լինում է տղամարդու կողմից. այդ է պատճառը, որ կինը ամուսնութեան

մէջ միայն կրաւորական դեր է խաղում։ Եթէ այրամուսինն է խախտում ամուսնութիւնը, նրա այդ վարմունքը մնում է առանց մի որ և է հետևանքի։ Կինը շատ դէպքերում ստիպուած է հաշտուել այր-ամուսնու անհաւատարմութեան հետ, որովհետև նա իւր ամուսնուց կախում ունի, որովհետև նա նրա գոյութեան նեցուկն է և նրա ներկայացուցիչն է հասարակութեան մէջ։ Իսկ եթէ կինն է թողնում իւր ամուսնուն, մեծ մասամբ նա անպաշտպան դրութեան մէջ է լինում, նոյն իսկ սարսափելի դրութեան՝ եթէ երեխաներ ունի։ Եւ եթէ նոյն իսկ թողնէը ամուսնուն դեկավարուելով իւր պատուի և սեփական արժանաւորութեան գիտակցութեամբ՝ «հասարակութիւնը», չնայելով կնոջ արդարութեան, վերաբերվում է դէպի նա իբրև մի կիսաաքսորականի, որ առանց ամուսնու արհամարհուած է և բոլորը խորշում են նրանից։ Նա յեռոյ, ի հարկէ, ձևական ապահարզան ձեռք բերելուց յետոյ, կարող է նորից ամուսնանալ, բայց ուր են այնպիսի տղամարդիկ, որոնք վերցնեն ամուսնուց բաժանուած կնոջը և այն էլ երեխաներով։ Միայն հարստութիւնը կարող է այդպիսի կնոջը գրաւիչ դարձնել, բայց այն ժամանակ վերցնում են ոչ թէ նրան, այլ նրա հարստութիւնը։ Իսկ տղամարդը առանց մի որ և է դժուարութեան գտնում է իւր համար ուրիշ կին կամ, առանց տհաճութիւն պատճառելու հասարակութեան, ազատ ապրում է մէկի հետ։ Հէնց սրանումն է կայանում տղամարդու և կնոջ դրութեան մէջ եղած տարբերութիւնը։

Այսպիսի պայմաններում կինը համբերութեամբ տանում է ամուսնութեան մէջ անտանելի տառապանքներ և վճռում է դիմադրել միայն այն դէպքում, եթէ նա ունի ծնողներ, բարեկամներ կամ հարստութիւն, որոնք պիտի նրա նեցուկը լինեն։ Բայց նոյն իսկ այս դէպքում, նա պատրաստ է տանելու շատ ու շատ բան, որովհետև ծնողների և բարեկամների կարծիքով չը կայ աւելի մեծ դժբախտութիւն, քան ամուսնաթող լինելը։ Իսկ որտեղ կինը զուրկ է նաև վերոյիշեալ պաշտպանութիւնից, նա այնտեղ ստիպուած է տանել ամեն տեսակ անբաւականութիւններ, կրել ամեն տեսակ վիրաւորանքներ, համբերել իւր ամուսնու բոլոր քմահաճոյքներին, կապտութիւններին ու վատ վարմունքին, մի խօսքով ստորանում է ինքը իւր առաջ, քան վճռում է այդպիսի մի քայլ անել։ Եթէ նա կորուի բնաւորութեան տէր կին է, այն ժամանակ կաշխատի գործ դնել իւր ունեցած միակ զէնքը—իւր լեզուն։ Կնոջ լեզուն, —որ առած է դարձել, ինչպէս և կնոջ, բանաստեղծների երգած ու գոված համբերութիւնը և հեզութիւնը, տղամարդկանց բռնակալութիւնից առաջացած մի հետևանք է, հետևանք հազարամեայ բնական ընտրողականութեան ու ժառանգականութեան։ Կնոջ համբերութիւնը, հեզութիւնը և զիջողութիւնը դէպի տղամարդը մեծ մասամբ ոչ թէ բարեգործութեան կամ առաքինութեան հետևանք է, այլ հետևանք թուլութեան, ուրեմն և —յանցանք։

Տղամարդու բռնակալութիւնը դէպի կինը

նման է բուրժուայի բռնակալութեան դէպի պրոլէտարիատը, շատ անգամ առաջինն աւելի խիստ, քան երկրորդը։ Պրոլէտարիան իր բանուորական ոյժը ծախում է գործատիրոջը ժամանակաւորապէս. եթէ նա գոհ չէ, մեծ մասամբ կարող է գտնել իր համար նոր ու աւելի լաւ գործատէր։ Իսկ կինն ընդմիշտ կապուած է իր տղամարդու հետ։ Նոյն իսկ այն դէպքում, եթէ կինն ամեն օր, ամեն ժամ իր մարդուց նեղութիւններ է կրում, պէտք է համբերի և ամուսնական շղթան տանի մինչև գերեզմանը։ Պրոլէտարիան աւելի անկախ է բուրժուայից, քան կինը տղամարդուց։ Առաջինը կարող է հեշտ միջոցով ձեռք բերել պատիւ և իրաւունք և կարևոր դէպքում կռիւ մղել իր հակառակորդի դէմ, միանալով իր համահաւասարների հետ։ Ուրիշ կերպ է կնոջ դրութիւնը։ Իբրև կին, նա պէտք է տանի բոլոր վիրաւորանքները. օրէնքը նրան աւելի քիչ է պաշտպանում, քան պրոլէտարիային, և այն էլ միայն շատ ծայրայեղ դէպքերում։ Երբ օրէնքը միջամտում է, նա տալիս է միայն ապահարզանի իրաւունք, բայց այդ ապահարզանը կնոջը աղքատութեան դուռն է գցում և նրան անել դրութեան մէջ դնում, տալով տղամարդուն ախորժելի հնարաւորութիւն, երկրորդ անգամ ամուսնանալու։

Պրոլէտարը իբրև տղամարդ, չափահաս դառնալուն պէս առանց սահմանափակման իր անձի տէր է, նա ունի քաղաքական և սոցիալական իրաւունքներ (լինեն նոքա նոյնիսկ ամենաչնչին), որոնց կարող է գործադրել, իբրև զէնք, իւր հարստա-

հարիչների դէմ կռուելիս։ Իսկ ամուսնու հետ շըղ-
թայուած կնոջ վրայ նայում են ինչպէս երե-
խայի վրա, ինչպէս մի անպաշտպան էակի վրայ։
Նա գտնւում է ամուսնու հովանաւորութեան ներ-
քոյ, նա իրաւազուրկ է, որովհետև նրան յայտա-
բարել են անչափահաս քաղաքացիապէս և քաղա-
քականապէս։ Բոլոր քաղաքացիական օրէնքները
նայում են կնոջ վրայ, իբրև ամուսնու հովանա-
ւորութեան ներքոյ գտնուողի վերայ, զրկելով նրան
ինքն իրան ղեկավարելու ազատութիւնից և դա-
տարանում առանց ամուսնու թոյլատուութեան
ցուցմունքներ տալու իրաւունքից։ Կինը լինելով
զուրկ քաղաքական իրաւունքներից, իւր օժիտով
քաղաքական իրաւունքներ է տալիս իւր ամուս-
նուն, որքան այդ իրաւունքը կախումն ունի սե-
փականութեան ցենզից։ Գերմանիայում Սակսօնա-
կան և ուրիշ համաձայնական կանոնադրութիւն-
ները տալիս են կնոջը, եթէ նա կալուածատէր է
և ամուսնացած չէ, ներգործական ընտրողական
իրաւունք, զրկելով նրան ընտրուելու իրաւուն-
քից։ Բայց հէնց որ ամուսնանում է, նա այդ ի-
րաւունքից զրկւում է, որը անցնում է նրա ա-
մուսնուն, նոյն իսկ եթէ վերջինս ոչինչ սեփական-
ութիւն չունի։ Մարդը նրա տէրն է, կնոջ «ես»-ը
ոչնչանում է։ Ամուսնութեան ժամանակ մարդը
երդւում է հաւատարմութեամբ, իսկ կինը ոչ
միայն հաւատարմութեամբ, այլ և հնազանդու-
թեամբ։ Եւ կնոջ այդ սարկային դրութիւնը մի-
այն եկեղեցական պսակադրութեամբ չի արտա-
յայտւում. քաղաքացիական պսակը նոյնպէս պա-

հանջում է հնազանդութեան երդումն։

Տղամարդու դրութիւնը բոլորովին այլ է։
Կնոջ զանցառութիւնը ամուսնական հաւատար-
մութեան դէմ քննվում է իբրև լուրջ յանցանք,
իսկ մարդու համար համարւում է միայն չնչին
մեղք։ Տղամարդու այդ ազատութիւնը ամուսնա-
կան հաւատարմութեան դէմ ընդունուած է օրի-
նական ճանաչել նոյն իսկ կնոջ կողմից։ Այսպէս,
օրինակի համար, տղամարդու սեռական յարա-
բերութիւնը մինչև ամուսնանալը ընդունում են
իբրև մի սովորական երևոյթ, երբեմն նոյն իսկ
գովասանքի արժանի։ Կան կանայք, որոնք հպար-
տանում են նրանով, որ իրանց յաջողուել է
«ճանկել» վերջապէս անառակ մարդուն։ Եւ մեր
«բարձր դասակարգերի» տղամարդը յաճախ իւր
համար օրէնք է դարձնում ամուսնանալ միայն
«կեանքի բոլոր զուարճութիւնները ճաշակելուց»
յետոյ, ուրիշ խօսքով, սեռական յագումից յե-
տոյ, երբ նա կէս կամ կատարեալ ինվալիդ (տը-
կար գինուոր) է, զգում է կնոջ կարիք, որը կը
խնամի նրան։ Շատ կանայք նոյն իսկ ամուսնու-
թեան մէջ թոյլ են տալիս, որ իրանց այրերը սե-
ռական յանցանքներ գործեն և գոհ են, եթէ այդ
պատահում է միայն որոշ սահմաններում, երբ
պահպանուած է արտաքին քաղաքավարութիւնը
և վերջնականապէս չեն արհամարհուած ամուսնա-
կան պարտականութիւնները։ Հարիւր երիտասար-
դից իննսունինը կը հրաժարուի այն օրիորդից,
որ ունեցել է յարաբերութիւն մի ուրիշ տղամար-
դու հետ։ Իսկ իրանց վերաբերմամբ այդ համա-

բում են այնքան բնական և արդարացի, որ այն ամուսնացող երիտասարդը, որ յայտնում է թէ մինչև ամուսնութիւնը մաքուր է մնացել, ծաղրւում է իբրև յիմար։

Չը կայ աւելի վնասակար բան, քան մերժել բնութեանը իւր իրաւունքները և պահանջները։ Սեռական յարաբերութիւնը չափահասութեան միջոցին նոյնքան կարևոր է, որքան հացը, ջուրը, հանգստութիւնը և քունը։ Եթէ ճնշում են սեռական ցանկութիւնը և բաւարարութիւն են տալիս ուրիշ անբնական ճանապարհով, քայքայւում է առողջութիւնը։ Բայց մի՞թէ բնութիւնը այդ պահանջները միայն տղամարդուն է յառաջադրում։ Արդեօք սեռական ցանկութեան ճնշումից չէ՞, որ հասու նացած հասակում կան բազմաթիւ հիւանդ կանայք։

Տղամարդը, եթէ նա ամօթխած չի, ելք է փնտռում իւր սեռական ցանկութեան համար և հեշտութեամբ էլ գտնում։ Իսկ կնոջից նա խիստ ատելութեան սպառնալիքով պահանջում է զօռով զսպել իւր սեռական ցանկութիւնները մինչև որ բերմունքը նրան մի ամուսին կը տայ։ Եթէ այդպիսի մարդ չէ գտնւում և նա մնում է «պառաւած աղջիկ»—ամենաթշուառ մի էակ երկնքի տակ «որ ենթարկուած է յաճախ անխիղճ ծաղրի, ինչպէս իւր քիչ թէ շատ բախտաւոր ընկերուհիներից. նոյնպէս և տղամարդկանցից — ապա նրանից աւելի խիստ են պահանջում առաքինութիւն և ինքնազսպում։ Նրան համարում են հին կահ կարասիք, բոլորովին անպէտք մի իր հասարակութեան համար։

Եւ իրաւ, ժամանակակից պայմաններում կնոջ սեռական զսպումն հետևանք է միայն այն հարկադրանքի, որ առաջանում է տղամարդու անձնապաշտութիւնից։ Նա պահանջում է կնոջից սեռական մաքրութիւն ոչ միայն այն պատճառով, որ այդ հաճելի է իր եսամոլութեան, այլ և նրա համար որ ունենայ գրաւական թէ ինքը չի ունենայ ուրիշի սիրոյ պտուղը և ուրեմն ընդունել իւր վրայ համապատասխան քաղաքացիական պարտականութիւններ։ Իսկ ինքը ընդհակառակը մեծ մասամբ համարում է անհամապատասխան իւր արժանիքին՝ անել կնոջը իւր կողմից նոյն զոհողութիւնը։ Իւր տիրապետող դիրքի՝ շնորհիւ, նա մեղանչում է, իսկ կինը՝ նրանից կախումն ունենալու և ընդհանուր նախապաշարմունքների պատճառով ստիպուած է և ընտելացել է ամուսնանալ մեղանչողի հետ։

Այդպէս է հասարակական յարաբերութիւնների տիրապետող իշխանութիւնը։ Եւ «հասարակական կարծիքը», որի արտայայտողները գլխաւորապէս իրանք տղամարդիկ են, ստեղծում է այնպիսի մի ճնշում, որ կանայք ակամայ ենթարկւում են նրան և նոյն իսկ իրանք էլ ձայնակցում են «ընկած» կանանց դատապարտութեան։ «Զոհին» պատրաստ են քարկոծել, իսկ «յանցաւորը» փայլող դէմքով վերադառնում է դէպի հասարակութիւն, և տղամարդկանց յօրինած օրէնքները քաջալերում են նրան իր վարմունքների մէջ։ Եւ այս կոչւում է քաղաքացիական բարոյականութի՛ւն։

Սեռական ցանկութեան ոյժով զսպելը առաջացնում է մի շարք վնասակար հետևանքներ, ստեղծելով հիստերիա, որ վերջը խելագարութեան է մատնում։

Լիւտերը, որ սակայն իւր քահանայական բթամտութեամբ պատճառեց շատ դժբախտութիւններ, շնորհիւ իւր սեռական ցանկութեան զսպման, որ պարտաւորեցրել էր այդ ուժեղ և առողջ մարդուն վանական կեանքը, հասկացաւ ամուրի կեանքի և սեռական յարաբերութիւնից զրկուելու անբնականութիւնը։ Այն, ինչ նա ասաց սրա մասին, կարելի է համարել ամենից ճշմարիտը և լաւը, ինչ որ առհասարակ կարելի է ասել այս հարցի վերաբերմամբ։ Նա ասում է. «կինը չի կարող միայ առանց տղամարդու այնպէս, ինչպէս առանց ուտելու, խմելու, քնելու և այլն։ Միւս կողմից և տղամարդը կնոջ կարիք է զգում։ Պատճառն այն է, որ մարդու բնութեան մէջ նոյնքան խոր է որդեծնութեան ցանկութիւնը, որքան և ուտելու ու խմելու ցանկութիւնը։ Եւ դորա համար էլ Աստուած տուեց մարդուն զանազան անդամներ, անօթներ, նեարդեր և այն ամենը, ինչ հարկաւոր է կեանքի համար։ Ով ուզում է սրան դիմադրել՝ անմիտ է վարվում, որովհետև դա միևնոյն է թէ ստիպես որ բնութիւնը դադարէ բնութիւն լինելուց, որ կրակը չը վառուի, մարդը չուտէ, չը խմէ, չը քնէ։

Բայց հասարակական պայմաններն այնպէս են, որ խանգարում են մեծ մասամբ կնոջ սեռական բաւականութեան։ Ոչ միայն նրա սոցիալա-

կան դրութիւնն է ստիպում երկիւղով սպասել, թէ արդեօք կը գտնուի մի ամուսին, որին նա դուցէ և չը սիրէ,—այլ և ինքը հասարակութիւնը պատերազմով և դաղթականութեամբ աշխատում է, որ սեռերի յարաբերութիւնը կնոջ համար անպատուղղութիւն ստանայ։ Բնութեան մէջ այսպիսի անչափակցութիւն (ի վնաս կանանց սեռի) գոյութիւն չունի, որովհետև վիճակագրութիւնը հաստատում է, որ 100 աղջկան դալիս է 105 տղայ, այսինքն մինչև անգամ հինգ հոգի աւել կայ տղամարդկանց դասից։ Միւս կողմից, ժողովրդագրութիւնը 1872 թ. Գերմանիայում ցոյց է տալիս կանանց սեռի նկատելի գերակշռութիւնը տղամարդկանց սեռից, այսինքն կանանց թիւը 20906739 էր, իսկ տղամարդկանցը —20151902։ Կանանց սեռի թիւը այսպիսով 754837-ով աւել, գլխաւորապէս չափահասներով, որովհետև, ինչպէս ցոյց է տուած, ծնուածներից տղամարդկանց թիւը աւելի մեծ էր կանանց թուից։ Դեկտեմբերի 1-ին 1890 թ. կային 24230832 տղամարդ և 25197638 կին մարդ։ Դարձեալ կանայք տղամարդկանցից 966806 ով աւել։ Ինչպէս ասուած է, այս երևոյթի գլխաւոր պատճառները պատերազմը և դաղթականութիւնն են։ Այս թուերի համաձայն գերմանացի կանանց ահագին քանակութիւնը դատապարտուած է ամուրիութեան։ Այս թիւն էլ աւելի մեծանում է նրանով, որ շատ երիտասարդներ տնտեսական թէ ուրիշ պատճառներից դրդուած հրաժարվում են ամուսնանալուց։

Այս ամենը զանազան տեսակ անբնական

դրութիւններ է առաջացնում։ Կնոջ չամուսնանալու վտանգը մեծանում է ժամանակակից պայմաններում ամենայն տարի և չի կարելի մեղադրել աղջիկներով հարուստ ընտանիքը, որ մտահոգութեամբ սպասում է ապագային։ Միւս կողմից այս պայմանները կնոջ մէջ զարգացնում են բնաւորութեան այնպիսի գծեր, ինչպէս սէր դէպի զարդերը, անփառութիւն, տղամարդկանց որսալը, խանդ, որը յաճախ ծաղրի և բամբասանքի է ենթարկվում, բայց որը այս պայմանների բնական հետևանքն է։ Սորա շնորհիւ պոռնկութեանը մնում է հարուստ հունձ, բազմաթիւ թեկնածուներով։

Կանանց բնաւորութեան այս վատ գծերը, որոնց հասարակութիւնից այնքան յաճախ դատապարտվում են, հեշտ հասկանալի են, իբրև կանանց կեանքի պայմանների բնական հետևանք։

Բուրժուա հասարակութիւնը կարող է պախարակել և ծաղրել,—և նա այդ անում է շատ յաճախ—բայց նա անզօր է փոխել այդ պայմանները կամ յետ մղել, որովհետև նա ինքն է ստեղծել նրանց։ Կանանց բնաւորութեան այդ յատկութիւնները միայն այն ժամանակ կը վերջանան, երբ բուրժուազական հասարակութեան տեղ կը լինի առողջ և կանոնաւոր ձևի հասարակութիւն։

Նոյն հասարակական պայմանները, այնքան անբարեյաջող կերպով ազդելով կանանց ազատութեան զարգացման վերայ, նպաստում են տղամարդուն, մանաւանդ երբ նա նիւթապէս բաւականին ապահոված է, սեռական բաւականութիւններին անձնատուր լինելու։ Տղամարդու համար նոյն իսկ

ամուսնութիւնը, ինչպէս յայտնի է ամեն մէկիս, արգելք չէ հանդիսանում և յաճախ միայն նրա համար, որ ամուսնութիւնը եղել է առանց անկեղծ սիրոյ։ Յիշեցնում եմ, բացի դրանից, թէ ինչպէս ստոր և անբարոյական միջոցներ են գործադրում, սովորաբար բարձր դասակարգի «չը պսակուած պարոնները» իրանց բթացած զգացումները գրգռելու համար։

Կնոջ նիւթական կախումը և նրա տղամարդկանցից դիտաւորեալ կերպով պահպանուած հոգեկան խակութիւնը, կապուած այն փաստի հետ, որ անհաւասարմութիւնը և գոյութեան կռիւը ստիպում են տղամարդուն ժամանակակից սոցիալական պայմաններում, ամուսնութեան վրայ նայել փողի տեսակէտից,—կնոջը դարձնում են ապրանք ու ամուսնութիւնը—մի ստոր առևտուր գործ։ Բնական, այսինքն բարոյական տեսակէտը երկրորդական տեղ է բռնում։ Կինը տղամարդուց չափազանց մեծ ատիճանով կախուած դրութեան մէջ է ընկնում։

Այդպիսով ժամանակակից հասարակութեան մէջ յարաբերութիւնները սեռերի մէջ նոյնքան վատառողջ են, որքան և բուրժուայի և պրոլետարիայի մէջ։ Տղամարդը իրաւունքների տէր է, կինը միայն պարտաւորութիւններ ունի։

Բայց որքան էլ վնասակար լինի, մինչև անգամ անբնական՝ մարդկային բարձր տեսակէտից, այդ վիճակը այնուամենայնիւ նա բնական է և միակ հնարաւոր ժամանակակից հասարակութեան տեսակէտից։ Կանանց կախումը տղամարդկանցից

հիմնւում է նոյն պայմանների վրայ, ինչպէս պրոլէտարիայի կախումը բուրժուայից։

Մասնաւոր սեփականութեան աշխարհը պահանջում է որ լինեն պրոլէտարիաներ, որպէս զի սեփականութիւն արտադրեն, բայց նա նոյնպէս պահանջում է «օրինական երախայք», որ ժառանգեն իրան։ Սեփականութեան կուտակումն բուրժուայի համար ոչ միայն մի միջոց է նպատակի համար, այլ նոյն ինքն նպատակն է նրա համար և նրան հարկաւոր է ժառանգ ոչ թէ Հռովմայեցու նման վերջին կամքը կատարելու համար, այլ իբրև իւր սեփականութիւնը պահպանող։ Դա սեփականութեան իրաւունքի պահպանելն է մահուանից յետոյ, սեփականատիրոջ կեանքի շարունակութիւնը գերեզմանում։ Ծնելով ժառանգ, կինը նրա համար դառնում է արդիւնաբերութեան գործիքներից մէկը։

Եւ այդ պատճառով նա ամուսնանում է սիրուց դրդուած միայն այն ժամանակ, երբ յատիշտակուած կնոջ գեղեցկութեամբ միևնոյն ժամանակ գտնում է սեփականութիւնը հաւաքելու իր ագահութեան բաւարարութիւնը կնոջ բերած օժիտի մէջ։ Ուրեմն ամուսնութիւնը նրա համար դառնում է վաճառականական ձեռնարկութիւն, որին նա ձեռնամուխ է լինում նոյնպիսի հաշուով, ինչպէս և ամեն մի ուրիշ ձեռնարկութիւն։ Նա վերցնում է կին առանց հրապուրուելու, առանց սիրոյ, եթէ միայն կինը բերում է իւր հետ հարուստ օժիտ և տալիս է նրան յոյս ծնելու նրա համար օրինաւոր ժառանգներ։

Ամուսնութեան այս բուրժուական բնաւորութիւնը հիմնուած կալուածական յարաբերութիւնների վրայ, մտել է հասարակութեան բոլոր դասակարգերի խաւերը։ Միայն ամենաստորին խաւերում որտեղ սեփականութեան խնդիրը մեծ մասամբ դեր չի խաղում, պահպանվել է ամուսնութիւնը իբրև մաքուր զգացմունքի գործողութիւն։ Այստեղ տղամարդու և կնոջ յարաբերութիւնների մէջ կայ հաւասարութիւն, եթէ ոչ օրէնքի համաձայն; — որովհետև այստեղ ևս սիրապետում են քաղաքացիական բուրժուական ձևերը, — գոնէ իրականապէս աւելի մեծ չափով է երևում, քան բարձր դասակարգերում։ Ամուսնական յարաբերութիւնների խախտումը դրա համար էլ ստորին խաւերում աւելի սակաւ է տեղի ունենում իբրև սեռական վատաշուութեան հետևանք, իսկ աւելի յաճախ լինում է նիւթական կարիքի և դրանցից առաջացած չարիքների հետևանք. վատ կրթութիւն, կապտութիւն և հարբեցողութիւն։ Այսպիսի դէպքերում պրոլետարիայի կինը չաշխատում է երկու տեսակ. նա ասնվում է իբրև կին և իբրև պրոլետարիատ։

Այստեղից երևում է, որ ամուսնական դաշինը մասնաւոր դաշն յայտարարելը կնոջ քիչ օգուտ կը բերի ճիշտ այնպէս, ինչպէս պրոլետարիային անտեսական ազատութեան յայտարարութիւնը։ Վերջինն ամբողջովին օգտաւէտ է դրամատիրոջ համար, ճիշտ այնպէս, ինչպէս ամուսնութիւնը, մասնաւոր դաշն դարձրած կը տար տղամարդուն աւելի մեծ իշխանութիւն կնոջ վե-

36637

ցայ։ Այստեղ մենք ամենեին աչքաթող ենք անում այն հանգամանքը, որ բուրժուական հասարակութիւնը դէպի մասնաւոր սեփականութիւնը և նրա հետ կապուած ժառանգական իրաւունքներն ունեցած իր վերաբերմունքի պատճառով, չի կարող համաձայնել այս ձևով ամուսնութեան հետ։ Կինը տղամարդու հետ հաւասար իրաւունք կունենայ այն ժամանակ, երբ նրանք երկուսն էլ կը լինեն միահաւասար դրութեան մէջ ոչ միայն իրաւաբանական, այլ և տնտեսական տեսակէտից, երբ կինը կօգտուի նոյն մարդկային իրաւունքներով, ինչ որ տղամարդը։ Երբ հասարակական յարաբերութիւնները տղամարդու համար կնոջ վերաբերմամբ անկարելի կը դարձնեն իշխող դերը, ինչպէս այդ գոյութիւն ունի այժմ, երբ ինքը կնոջ կերակրողն է հանդիսանում։

Հասարակական այն կազմակերպութիւնը, որ չէ ճանաչում ոչ հարստահարողին և ոչ հարստահարուողին ոչ միայն քաղաքական, տնտեսական և կրօնական, այլ և սեռերի յարաբերութիւնների մէջ, սոցիալիստական կազմակերպութիւն է։

Միայն սոցիալիստական կազմակերպութեան միջոցին կինը, ինչպէս և ամեն մի ճնշուող ձեռք կը բերէ կատարեալ մարդկային իրաւունքներ։ Սոցիալիզմի նպատակն է հասարակութեան *բոլոր* անդամների, ուրեմն և *կանանց* այժն ու ընդունակութիւնները ամենաբարձր զարգացման հասցնել։ Նա պահանջում է հասարակութեան բոլոր անդամներից, ուրեմն և կանանցից, նրանց այժի և ընդունակութիւնների գործադրութիւնը յա-

նուն ընդհանրութեան օգտի։ Նա տալիս է *բոլոր* անդամներին, ուրեմն և *կանանց լիուլի բաժին* հասարակական վաստակի և ամեն մի գործունէութեան հետևանքի մէջ։ Միայն սոցիալիստական կազմակերպութեան մէջ սէրը, մարդկային այդ ամենաազնիւ զգացմունքը, կարող է *կատարելապէս* և *ամբողջովին* զարգանալ. բոլոր կեղծ նախապաշարմունքները, ընտանեկան կեանքի երջանկութեան բոլոր խոչնդոտները վերացվում են, *կինը* և տղամարդը արդարև *հաւասար* իրաւունքներ ունեն, *միայն* նրանց հակումը և ձգտումը դէպի միմեանց երևան է գալիս իբրև վճռական պայման ամուսնութեան ժամանակ։ Ի՞նչպէս այժմեան դրութիւնը սրան նման չէ։ Ի՞նչպէս յաճախ են այժմեան ամուսնութեան մէջ մշտական կռիւներն ու անբաւականութիւնները, հանելով յաճախ կոպիտ բռնութեան և նոյն իսկ յանցանքների։ Որտեղ չը կայ սէր,—որովհետև ամուսնութիւնը սկզբից մի հարկադրուած պսակ է, հիմնուած միայն նիւթական կամ դասակարգային հաշուի վրայ—այնտեղ շուտով յայտնուում է ատելութիւն ամուսինների մէջ, մանաւանդ այն դէպքում, երբ մի կողմը ստիպուած է լինում միւսի վերաբերմամբ ստանձնել զանազան պարտականութիւններ, խանգարելով ազատ կամքի ինքնաորոշութեանը և ուրիշ հակումներին բաւարարութիւն տալուն։ Յաճախ պարապութիւնը կամ չափից դուրս շռայլ կեանք վարելը յազեցնում է երկուսին և առաջ է բերում ձգտում բազմազանելու սէրը։ Երբեմն էլ ամուսնութիւնը

խզում է այն պատճառով, որ միայն ամուսնութեան մէջ երևան են գալիս բնաւորութեան անհաշտ և անդուրեկան յատկութիւններ։ Քիչ չէ պատահում նոյնպէս, հէնց որ անցնում են կրքի առաջին բռնկումները, երևան է գալիս չափից դուրս մեծ տարբերութիւն և մեծ հակասութիւն հայացքների և կրթութեան մէջ։ Կամ թէ նիւթական չափազանց ծանր հանգամանքները յանկարծ սուր հակասութիւն են կապում սովորական կեանքի վերաբերմամբ։ Մի խօսքով բազմաթիւ պատճառներ, որոնք հեռանք են կամ նիւթական պայմանների, կամ բոլորովին զանազան, յաճախ արուեստական կերպով ծնեցրած հոգեկան կարիքների և հայացքների, առաջ են բերում ժամանակակից ամուսնութեան մէջ այնպիսի դրութիւն, որ յաճախ դառնում է անտանելի տանջանք երկու կողմերի համար, որ քայքայիչ ազդեցութիւն է անում ընտանեկան կեանքի և երեխայոց կրթութեան վերայ բացասական մտքով, բայց միևնոյն ժամանակ և դարձնում է անդրդվելի այս ապագայում միակ խելացի միջոցը—ապահարզանը փոխադարձ համաձայնութեամբ, որովհետև սրան խանգարում են զանազան տեսակ նախապաշարմունքներ։ Այսպիսի տխուր դէպքեր և երջանկութեան արգելքներ ամուսնութեան մէջ սոցիալիստական հասարակութիւնը չը գիտէ, և որտեղ դրանք, որպէս բացառութիւն, պատահում են, այնտեղ հեշտութեամբ վերացւում են։ Ամուսնութիւնը, բառիս բուն նշանակութեամբ, է մասնաւոր դաշն, կապուած երկու կատարելապէս համա-

հաւասար իրաւունքներով օժտուած կողմերի մէջ, և կարող է խզուել առանց որևէ արտաքին արգելքների, հէնց որ մասնակցողների յարաբերութիւնները դարձնում են այդ անհրաժեշտութիւն։

Չի կարելի երևակայել աւելի մեծ անբարոյականութիւն, քան այն, երբ երկու մարդիկ, չը տանելով և չը յարմարուելով միմեանց, բռնի կապուած են միմեանց հետ մինչև կեանքի վերջը։ Այս պատճառով էլ վնասվում է ոչ միայն սրանց սեփական բնաւորութիւնը, ընդունելով այսպիսի ատիպոդական դրութիւնից ամենավատ յատկութիւններ, այլ և վնասվում են բոլոր նրանց շրջապատողները և մանաւանդ երեխայքը։ Ոչինչ այնքան ճնշող և քայքայիչ ազդեցութիւն չունի երեխաների վերայ, ինչպէս ծնողների ամենօրեայ օրինակները, միմեանց հետ անհաշտ լինելը, միշտ երեխաների ներկայութեամբ, պատահելուն պէս միմեանց յանդիմանելը, ատելութիւնը կամ մի որ և է աւելի վատ դէպքը։ Այս բոլորի հետ երեխաների դէպի ծնողներն ունեցած յարգանքը և սէրը կորչում է և յաճախ առաջ է բերում երեխաների հոգու մէջ դառը շփոթ։

Ոչինչ չի կարող այնպէս խիստ դատապարտել բուրժուական ամուսնութեան ատիպոդական բնաւորութիւնը, պայմանաւորուած անտեսական յարաբերութիւններով,քան այսպիսի կամ համանման փաստերը՝ որոնք. այս անկարելի է հերքել, տեղի են ունենում շատ ամուսնութիւններիմէջ։ Բուրժուական հասարակութիւնը չը գիտէ միջոց և չի էլ կարող ունենալ, որ դիմադրի այսպիսի դրու-

թեան։ Laisser faire-ը այս դէպքում ևս բուրժուական իմաստութեան ամենաբարձր չափն է։ Սոցիալիստական հասարակութեան մէջ ամուսնութիւնը ամենամաքուր յարաբերութիւն է փոխադարձ սիրոյ վերայ, յարաբերութիւն հիմնուած հաւասար իրաւունքների տէր մարդկանց, կրթուած փոխադարձ յարգանքներով։ Այսպիսի ամուսնութիւնը ունի անսահման աւելի բարոյական հիմք, քան ժամանակակից ամուսնութիւնների մեծամասնութիւնը, որովհետև երկու կողմերը միանում են միմեանց պատկանելու մտադրութեամբ։ Սոցիալիստական հասարակութեան մէջ գոյութիւն չի ունենայ, ինչպէս այդ վերագրում են սոցիալիզմին նրա *հակառակորդները*, այսպէս կոչուած «կանանց ընդհանրութիւն» — որի անունը նոյն իսկ *կնոջ ամօթայի անարգանքն* է արտայայտում, և որը իսկապէս գոյութիւն ունի մի քանի դասակարգերի համար։ Ընդհակառակը, ինչպէս այդ հաստատւում է հեշտութեամբ, ժամանակակից ստիպողական ամուսնութիւնը աւելի մեծ իրաւունքով կարելի է անուանել *անբարոյական* յարաբերութիւն։ Ո՞րքան անհնչան է այն ամուսնութիւնների թիւը, որոնց կնքուելու ժամանակ հաշուի չեն առնվում հարստութիւնը և դասակարգը։ Ո՞րքան բազմաթիւ են այն դէպքերը, երբ կինը ամուսնանում է ոչ սիրոյ, այլ նրա համար որ կեանքի պայմանները ստիպում են նրան տեսնել ամուսնութեան մէջ «տանկներին պաշտպանող տուն»։ Ո՞րքան յաճախ են այնպիսի ամուսնութիւններ, ուր տիրապետում է այնքան

մեծ անհամաձայնութիւն, որ, չը նայած նոյն իսկ կնոջ համար անյաջող պայմաններին, գործը հասնում է ապահարզանի։ Եւ դարձեալ, որքան յաճախ են այնպիսի ամուսնութիւններ, երբ երկու կողմերն յարմարւում են լուռ ու մունջ, որպէս զի գործը չը հասնի «հասարակական խայտառակութեան», աչքի առաջ ունենալով զանազան գործնական շահեր։ Եւ վերջապէս որքան են այնպիսի ամուսնութիւններ, ուր տիրում են եթէ ոչ կռիւներ և խռովութիւններ, գոնէ սառը, սովորական կեանք «մէկը միւսի կողքին», որի հետ մի կերպ հաշտւում են, որովհետև այլ կերպ անկարելի է։ Ընտանեկան կեանքին ծանօթ եղողներից որը յանձն կառնի հերքել այդ։ Բայց և այնպէս, գտնւում են և այնպիսիներ, որոնք պնդում են, թէ ժամանակակից ամուսնութեան ձևը ամենալաւ և նպատակայարմար «սուրբ» հիմնարկութիւն է։ Գերմանիայում 1873 թ. ութ պրուսական գաւառներում գանգատաւոր ամուսինների թիւը, որոնց գործերը հասել են քահանային, հասնում էր 7325-ի, որոնցից 2829-ին հաշտեցրել են շնորհիւ քահանայի «համոզելու ճարտարութեան», 3377-ը մնացել են անհաշտ, իսկ 1119 գործեր դեռ մնում էին չը վերջացած։ Այս թուերը, վերաբերում են միայն մի տարուան և միայն բողոքական ժողովրդին, որովհետև կաթոլիկ եկեղեցին, ունենալով իր մէջ ազգաբնակութեան մի երրորդ մասը, խիստ մերժում է ապահարզանը և յամառ կերպով պահանջում է պահել արդէն մի անգամ կապուած ամուսնութիւնը։ Բացի դրա-

նից ոչ ոք չի հաւատալ, որ քահանաներով հաշուուած ամուսինները իսկապէս հաշտ են։ Նոյն տարում կրկնուել են կռիւների 463 դէպքեր, որոնցից 267, այսինքն աւելի քան 4/7-ը ամուսիններին մնացել են առանց հաշտուելու և վերոյիշեալ 3377-ի նման ստացել են ապահարզան։ Եւ այս է ժամանակակից բարոյական ամուսնութիւնը, իսկ քանի՞ հազարներ խոյս են տալիս այս վերջին քայլից։

Սոցիալիստական հասարակութեան մէջ ամուսնութեան պտուղները — երեխայքը, թափուած տնանկներին պաշտպանող տներում, կրթարաններում կամ մեծանալով ողորմելի խեղճերի տնակներում, չը պէտք է փչանան, ինչպէս այդ պատահում է յաճախ այժմ. իսկ միւս կողմից նրանց երես չեն տալ մանկանոցներում կամ զիշերօթիկ վարժարաններում, բայց նրանց հետ կը վարուեն իբրև թանկագին բոյսերի հետ, որոնց զարգացողութիւնը պահանջում է մեծ հոգացողութիւն։ Սոցիալիստական հասարակութիւնը հոգ կը տանի երեխաների յառաջադիմութեան և բնական զարգացողութեան վերայ, չը խանգարելով դրա հետ և ծնողների սիրուն։ Պարտադիր ընդհանուր ուսումը կը հանի պարտադրուած ընդհանուր կրթութեան։

Սրա հետ միասին, երբ սոցիալիստական հասարակութեան մէջ կանայատանան ժամանակակից պակասութիւնները և յանցանքները ամուսնութեան մէջ, այն ժամանակ կը վերանայ նոյնպէս մանկասպանութիւնը, որ կատարվում է այ-

ժմ ամենաողորմելի և դժբախտ էակների — կանանց ձեռքով, որոնք խաբուել են դայթակղեցնողներից կամ վախեցել հասարակական արհամարհանքից կամ միջոց չեն ունեցել պահելու իրանցից ծնուած խեղճ էակներին։

Կը վերանայ վիժելը, այդ զզուելի անբնական միջոցը, տարածուած այսպէս ասուած, կրթուած կանանց մէջ, իւրեանց մեղքը ծածկելու նպատակով, կամ խանգարել երեխայի ծնունդը, որին անկարելի է կրթել «իւրեանց կոչման համաձայն»։ Կը վերանայ վերջապէս պոռնկութիւնը, որ զարգանում է օրէցօր, որովհետև ընտանիքի համար գոյութեան միջոցի ձեռք բերելը աւելի է դժուարանում, որովհետև բանւոր կնոջ աշխատավարձն ընկնում է և որովհետև մեծ թըւով երիտասարդ ազամարդիկ, զանազան պատճառներից դրդուած, հրաժարվում են ընտանեկան կեանքից, բայց և աւելի խիստ են փնտրում բաւականութիւն իրանց սեռական պահանջների համար ամուսնութիւնից դուրս։

Հէնց սոքա են դլխաւոր պակասութիւնները, որոնք ընդդրկում են զարհուրելի կերպով մեր ամբողջ հասարակութիւնը, տարածում անասելի ապքաստութիւն շատ ընտանիքներում և վարակում ամբողջ հասարակութիւնը։

Մարդկային ճնշուած ընոյթը ձգտելով ազատութեան իրան ճնշող կապանքներից, որ դրել են նրա վերայ հասարակական հիմնարկութիւնները և պահում են քաղաքական ու եկեղեցական հիմնարկութիւնները, ստիպուած է դիմել յան-

ցանքի, իբրև միակ ելքի։ Այն զօրեղ վրդովմունքը, որ ստանում է կեղծ ուղղութիւն մեր անարդար պայմանների շնորհիւ, ստեղծում է յանցանք, որը պատժւում է հասարակութիւնից խստութեամբ և անգթութեամբ, չը նայելով որ ինքըն է այդ բոլորի պատճառը։

Յանցանքների թիւը աւելի ևս կը մեծանայ, որքան մարդկային բնական գոյութեան պահանջներն աւելի ստիպողական են դառնում և նրանց բաւարարութիւն տալն անհնարին է լինում հասարակութեան ժամանակակից կազմակերպութեան միջոցին։ Հասարակութիւնը չի հանդուրժանայ մինչև չի ստեղծուի նոր կազմակերպութիւն, որ հնարաւորութիւն կը տայ ամեն մարդուն զարգացնելու բոլոր իւր ձիրքերը և ընդունակութիւնները, սովորեցնելով, կրթութեան լայնացրած, խելացի սիստէմի միջոցով, գործադրել իւր ոյժերը, թոյլատրելով, ամենքի համահաւասարութեան վրայ հիմնած ազատութեամբ. շահագործել իր ոյժերն ու ձիրքերը իր սիրած գործի մէջ, և տալով ամեն մէկին իրաւունք, իբրև ինքնըստինքեան հասկանալի մի բան, վայելել հասարակութեան բոլոր արդար վաստակները։

Մանաւանդ երկու դասակարգ ժամանակակից հասարակութեան մէջ պիտի աշխատեն, յանուն իրանց շահերի, հասնելու այս նպատակին— *պրօլետարիանները և կանայք։*

Վաղուց ժամանակ է, որ գերմանական սոցիալիզմը հասկանայ այն շատ կարևոր շահը, որ ունեն կանանց համար նրա ձգտումները և գործէ

սրան համաձայն։ Քնքոյշ, խորը թափանցող մի զգացմունքով, որ նա, իբրև ճնշուած, տածում է դէպի ճնշուածները և որը բնազդմամբ տալիս է նրան յոյս, թէ ազատելով մէկ ճնշուածին, կը վերջանայ կամ կը թեթևանայ և նրա սեփական ճնշումը, նա ամեն մի խորը շարժման մէջ խաղում է աչքի ընկնող դեր, նուիրուելով նրան ամբողջ հոգւով։ Այդ են ապացուցանում քրիստոնէութեան հիմնադրութիւնն ու տարածումը, կրօնական—սոցիալական շարժումները միջին դարում, գիւղացիական պատերազմը, ֆրանսիական յեղափոխութիւնը, յունիսեան ապստամբութիւնը, կոմունիստական շարժումը։ Մենք ներկայումս պատահում ենք կանանց ուլտրամօնտանական (պապական իշխանութեան կոյր կողմնակից) և սոցիալիստական բանակներում։ Նրանց մասնակցութիւնը ուլտրամօնտանական շարժման մէջ բացատրվում է նրանով, որ նոցա մտքի զարգացողութիւնը դիտմամբ *աւելի ստատիկ* էր արհամարհվում, քան պրօլետարիաներինը։ Չէ՞ որ ճնշողների առաջին և գլխաւոր պայմանն է պահել ճնշուածներին անգիտութեան մէջ։ Այս պատահում է համարեա առանց բացառութեան ամեն դասակարգի կանանց մէջ։ Պրօլետարիատ կինը հոգեպէս *աւելի մօտենում* է բուրժուա կամ արիստոկրատական դասակարգերի կանանց, քան տղամարդ պրօլետարիան նոյն դասակարգերի տղամարդկանց։

Որտեղ *ընդունակութիւնը* թոյլ է զարգացողութեան և վարժութեան բացակայութեան պատճառով, այնտեղ *աւելի* զարգացած է *զգացմունքը։*

Այդ չափից դուրս—ի վնաս բանականութեան—զօրեղ զգացմունքը շահագործուել է առանձնապէս եկեղեցու կողմից, որ հիմնուած է միայն զգացմունքի վրա։ Կինը եկեղեցուն հաւատարիմ է, որովհեան յոյս ունի՝ գտնել նրա մէջ իւր վշտերի մխիթարողին, դժբախտութիւններից ազատողին, որոնց առաջ նա իրան զգում է միանգամայն անպաշտպան։ Սոցիալիզմի նպատակն է—ազատել կնոջը այսպիսի մոլորութիւնից և նոյնպէս խլել նրան եկեղեցոյ ձեռքից։ Նա պատկանում է մեզ, մենք կուում ենք նրա իսկական ազատութեան համար, միայն մեր նպատակների իրականացման մէջ նա կը գտնի իսկական ազատութիւն և անկախութիւն. դորա համար թող նա կանգնի մեր կողմը իբրև դաշնակից։ Ազատելու ժամանակ կինը ի նկատի է առնվում ոչ միայն իբրև ամուսին, այլ և իբրև քաղաքացի, բանուոր և առհասարակ իբրև հասարակական էակ։

Կարևոր յարաբերութիւնների կարճառօտ բացատրութիւնը կապացուցի այդ։

Մի՞թէ կնոջ, իբրև ամուսնու, շահը չէ՞ հասարակական կեանքը, հիմնուած խաղաղ զարգացողութեան վրայ։ Պատերազմը սպառնում է նրան զրկել ամուսնուց, իբրև իր երեխաների հօրից և կերակրողից։ Ամենայաջող դէպքերում պատերազմը ծանր զրկանք կամ իսկական քայքայում է պատճառում նրա անտեսութեան՝ երկար ժամանակով կամ ընդմիշտ։ Պատերազմը սպառնում է նրան իւր որդու մահով կամ անդամալուծութեամբ, որին նա չարչարանքով և ցաւերով ծնել է, աւելի շատ քան երկու տասնեակ տարի խնամել պահել է մայրական գութով, որը գիշեր ցերեկ նրա մատծողութեան առարկան է եղել և որին նա յոյս ունէր ծերութեան հասակում ունենալ իւր մխիթարանքն ու նեցուկը։ Եւ եթէ նոյն իսկ իւր կասկածները բախտաւորութեան վերաբերմամբ չեն իրագործվում, քանի՞ ամիսներ պէտք է անցկացնի մահուան սարսափի մէջ։ Թէ որքան մեծ պէտք է լինի չամուսնացած կանանց շահը կեանքի խաղաղ ու հանդիստ զարգացման պայմաններում, ցոյց են տալիս մեր վերև բերած թուները։ Պատերազմը և նրանից առաջ եկած գաղթականութիւնը մեծացնում են աղջկայ համար իւր ամուսնական և մայրական կոչման չիրագործելու հաւանականութիւնը, նրա կեանքի այդ նշանաւոր և գեղեցիկ նպատակը։

Կեանք լափող պատերազմը սպառնում է կընոջը, բայց սա անկարող է փոխել որ և է բան։ Որովհետև նրա ձայնը ոչինչ են համարում։ Հայհոյանքները և ծաղրերը թափվում են նրա վրայ սահմանափակ խելքի տէր ազամարդկանց կողմից, երբ կինը համարձակվում է պահանջել ընտրութիւններին մասնակցել, իւր մարդկային ու կանացիական իրաւունքների պաշտպանութեան նպատակով։

Եւ ինչպէս այս դէպքերում, նոյնպէս է գրութիւնը թէ պետական և թէ հասարակական կեանքի մէջ։ Կինը գլխաւորապէս տանջվում է կողմնակի տուրքերի ծանրութեան տակ, գոյութեան միջոցների թանգանալուց և վատանալուց, առա-

ջացած շահագործութիւնից և խաբեբայութիւնից, որոնք դարձնում են նրա համար անհնարին նրան թողուած փողերի գումարով ձեռք բերել սովորական կարիքների միջոցները։

Հէնց որ կինը կը հասկանայ օրէնքների դրութիւնը հարկային ժողովի մասին, նա կը փոխուի, կը դառնայ ագիտատոր, չը զիջանելով գործունէութեան և եռանդի մէջ ամենավճռական տղամարդուն։

Եւ միթէ կնոջ բարձր շահը չէ՞ կանոնաւոր դրված կրթութիւնը. ոչ միայն ընդհանուր այլ և մասնաւորապէս կանանց կրթութիւնը։ Ինչպէս տղամարդկանց տիրապետող դասակարգը, որ նիստեր ունի պետական և հասարակական հիմնարկութիւնների մէջ, այն կարծիքի է, որ խեղճի երեխան պէտք է բարձր ուսում չը ստանայ, որ շատ իմաստուն և դորա շնորհիւ, շահագործութեան հակառակորդ չը դառնայ, ճիշտ այդպէս էլ նա գտնում է, որ աղջկերքը պէտք է ստանան անհամեմատ աւելի քիչ ուսում քան տղաները, որովհետև այդ է պահանջում նրանց ապագայ կոչումը, երբ ամուսնու կամքին հնազանդուող տան տիկին պիտի դառնան։ Խելօք կինը—դժբախտութիւն է։ Դասակարգերի տիրապետութիւնը և սեռերի տիրապետութիւնը միևնոյն հետևանք են տալիս։

Միևնոյն են արդօք հետևանքները։ Ո՛չ, կնոջ համար որոշ հանգամանքներում այդ հետևանքները կուտակւում են աւելի ևս ճակատագրական կերպով։ Իբրև բանուոր, նա իւր արհեստի մէջ

առաջանում է նոյնքան, որքան և տղամարդը, իսկ աւելի նուրբ գործերում, որոնց մէջ նա առաւել ևս ընդունակ է տղամարդուց, աւելի շատ է առաջադիմում։ Բայց և այնպէս կնոջ աշխատանքը աւելի վատ է վարձատրվում քան տղամարդունը։ Այդ նոյնքան վերաբերում է բուրժուա ձեռնարկողին, որքան և տէրութեանը։ Վերջինը կանանց պաշտօն է տալիս փոստատներում, երկաթուղում, հեռագրատներում։ Ի՞նչու համար։ Մարդասիրութիւնի՞ց դրդուած արդեօք։ Ամենևին ոչ։ Տէրութիւնն այդ անում է նրա համար, որ կինը աւելի էժան է աշխատում և ներկայացնում աւելի հեշտ ընկճուող գործիք, քան տղամարդը։

Իբրև աշխատող, կինն աւելի մեծ շահ ունի ընդհանուր սոցիալական օրէնսդրութեան մէջ։ Բոլոր հարցերը, որոնք վերաբերվում են աշխատող տղամարդկանց, միատեսակ հետաքրքրում են— և կնոջը։ Արդեօք գործերի կանգնած դրութիւն առաջացնող պայմանների մէ՞ջ ենք ապրում, թէ այնպիսի պայմանների մէջ, երբ ահագին կրիզիսներին յաջորդում են արդիւնաբերութեան ամենավայրենի փարթամութեան շրջանները, այդ միևնոյն չէ կնոջ համար։ Մի խօսքով ոչ մի հասարակական երևոյթ չի կարող կնոջ համար չունենալ նոյն շահը, ինչ որ տղամարդու համար և եթէ նա ամուսնացած է, այս շահն աւելի ևս մեծանում է։

Կինը շնորհիւ իւր անպաշտպան դրութեան աւելի ևս գտնում է շահագործողի ձեռքում. նա յաճախ ստիպուած է նոյն իսկ իր պատիւը տալ շահագործողին և նրա ծառայողներին ցեխոտելու

համար։ Կանանց մի նշանաւոր քանակութիւն, աշխատելով մեր գործարաններում, մեր մօդային խանութներում, կանանց ձեռագործների խանութներում, գրասենեակներում, բիւրօներում և այլն, ծառայում են իւր հրամայողի վաւաշոտ կրքերին։ Այդ հիմնարկութիւններից մի քանիսները ներկայացնում են իսկական հարէմներ։ Այդ սոր ծառայութեան ինչպէս ինքնակամ նուիրուողները, նոյնպէս և նոքա, որոնք անում են այդ ստիպուած, կնոջ սոցիալական դրութեան զոհերն են։ Բաւական չի որ չամուսնացած կինը պէտք է զոհի իրան իւր—«հացատուի» կրքերին, քիչ չեն և այնպիսի դէպքեր, երբ հարուստ և բարձր դիրք ունեցող անառակը մոնում է և ընտանիքի խորքը և ստիպում կնոջը, վերջինիս իւր ձեռքում գտնուող ամուսնու օգնութեամբ, անձնատուր լինել իրան։ Թէ բանուորների և թէ աստիճանաւորների շրջաններում նմանօրիակները պակաս չեն։ Այս բոլոր դրութիւնների պատճառները, կրկրում ենք, թաղնուած են միայն մեր սոցիալական պայմաններում։

Իսկ ժամանակակից հասարակութիւնը պարծենում է իւր բարոյականութեամբ, քարոզում է ամուսնութեան սրբութիւն և գովում է իւր բարքն ու ուսումը։ Իսկ ով այս դրութիւնները զննում է անաչառ կերպով, նա գալիս է միանգամայն հակառակ եզրակացութեան։ Ուստի և Ceterum censeo՝ չը կայ ուրիշ միջոց, բայց եթէ առողջ պայմանների վերանորոգումը սոցիալական հիմքերի վերայ։

139

ԳԻՆՆ է 10 ԿՈՊԵԿ

«Ազգային գրադարան»
NL0235816

55.794